ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԳՈՌԱՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԸ. Դ. ՎԵՐՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՈՒՄ

Գեորգիևսկի դաշնագրով (1783 թ.) Արևելյան Վրաստանի նկատմամբ ռուսական հովանավորության հաստատմամբ և 1787-1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի հաղթական ավարտից հետո Կովկասում Ռուսաստանի շահերին սպառնացող թուրքական վտանգը գործնականում բացառվեց[1]:

ԺԸ. դ. 90-ական թթ. ռուսական կայսրությունն ակտիվացնում է իր կովկասյան քաղաքականությունը: Խորհրդային պատմագրության մեջ կարծրացած էր այն տեսակետը, թե 1787-1791 թթ. ռուս թուրքական պատերազմի ժամանակ ռուսական կառավարող շրջանակների ուշադրությունից դուրս է մնում «դաջարական վտանգը»[2]: Դա մասամբ է համապատասխանում իրականությանը, քանի որ թեև ռուսական իշխանությունների ողջ ուշադրությունը կենտրոնացած էր տարածաշրջանում թուրքական գործոնի վրա, այնուամենայնիվ, Հյուսիսարևելյան Այսրկովկասի նկատմամբ վարվող քաղաքական ուղեգիծը շարունակում էր մնալ արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը[3]: Իրականում, մինչև Լութֆ Ալի խանի նկատմամբ վերջնական հաղթանակը, Պետերբուրգում կարծում էին, որ Աղա Մուհամմադ խանը չէր համարձակվի ոտնձգություն կատարել Ռուսաստանի հովանավորությունը ճանաչած երկրների նկատմամբ: Քարթլի-Կախեթի միացյալ թագավորության արքա Հերակլ Բ., վախենալով իրանական հնարավոր ագրեսիայից, օգնության խնդրանքով դիմում է ռուսական հրամանատարությանը: Գեներալ Գուդովիչը շտապում է հանգստացնել վրացական կողմին: Նա պատասխանում էր, որ թեպետ Աղա Մուհամմադ խանը հաղթող էր դուրս

1 Տե՛ս **О. Маркова**, *Россия, Закавказье и международные отношения в XVIII веке*, М., 1966, էջ 275: Սակայն Թուրքիան Յասսիի պայմանագրով (կետ VI) պահպանեց իր ազդեցությունը Կուբանի ձախ կողմի ժողովուրդների նկատմամբ ("Полное Собрание Законов Российской Империи'' (ПСЗРИ), т. 23, հկո., 1830, էջ 290): Հետագայում այս հանգամանքը նպաստավոր պայմաններ ստեղծեց Սեւ ծովի հյուսիսարևելյան շրջանների նկատմամբ թուրքական նկրտումների համար:

2 Տե՛ս **О. Маркова**, նշվ. աշխ., էջ 286:

3 Պոտյոմկինին 1791 թ. գրած նամակում Եկատերինա Բ. նշում էր, որ Ամերիկայից ու Սիբիրից լուրերը մայրաքաղաք են հասնում ավելի շուտ, քան Կովկասից ("Русская старина", т.17, декабрь, 1876, էջ 646):

եկել երեքամյա պայքարից եւ զորքերը բաժանել երկու մասի՝ Մուղանի դաշտով եւ Երեւանի ուղղությամբ առաջ շարժվելու նպատակով, սակայն մոտ ապագայում Վրաստանի վրա չի հարձակվի, քանի որ պետք է իրեն ենթարկի անհնազարդ խաներին[4]:

Միաժամանակ, գեներալ Գուդովիչը Պետական խորհրդից գործողությունների ճշգրտումներ էր պահանջում Աղա Մուհամմադ խանի՝ Վրաստանի վրա հնարավոր հարձակման, Իրանում գտնվող ռուսական առեւտրականների նկատմամբ ճնշումների եւ Դերբենդի խանից ու շամիալից իրեն շահ ճանաչելու պահանջի դեպքերում[5]:

Ստեղծված քաղաքական բարդ իրավիճակում ակնհայտ էր, որ ռուսական կողմը Վրաստանում եւ Այսրկովկասում ընդհանրապես, 1790-ական թթ. սկզբին «իրանական վտանգին» արագ դիմակայելու իրատեսական հնարավորություններ չուներ: Պաշտպանության բարձր մակարդակ էր ապահովված միայն Սարո կղզու նկատմամբ, որ ռուսական առեւտրի կենտրոն էր: Կասպից ծովում գտնվող չորս ռազմանավերից երկուսը մոտեցել էին կղզուն եւ անհնարին դարձրել Աղա Մուհամմադ խանի ծովային գրոհը: Անհրաժեշտության դեպքում նախատեսվում էր ծով մտցնել նորակառույց ռազմածովային ռմբարկու նավը:

Եկատերինա Բ. կայսրուհու 1792-1793 թթ. հրամանագրերում բացահայտ արտահայտված էր Այսրկովկասի նկատմամբ Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը, որտեղ հիմնական շեշտը դրվում էր տեղի խաներին եւ առաջնորդներին ռուսական ազդեցության ոլորտում պահելու վրա: Նախատեսվում էր հովանավորություն խնդրելու համար շամիալից, Դերբենդի եւ ավար խաներից, ուցմիից եւ հարեւան մյուս «պարսից տիրակալներից» պահանջել պաշտոնյաներ ուղարկել ռուսական արքունիք՝ խուսափելով ավատատիրական կռիվներին միջամտելուց: Կովկասյան գծի գլխավոր հրամանատար գեներալ Գուդովիչից կայսրուհին պահանջում էր առեւտրային արտոնություններով եւ այլ «օգուտներով» շահագրգռել տիրակալներին՝ ճանաչելու ռուսական հովանավորությունը[6]:

Գուդովիչին 1793 թ. ապրիլի 19-ին տրված կայսերական հրամանագրով նախատեսվում էր օգտվել Իրանում տիրող քաոսային իրավիճակից եւ հովանավորության տակ առնել Կասպից ծովի ափամերձ ժողովուրդներին: Հաշվի առնելով թուրքական գործոնը՝ խուսափել ծովից դեպի հարավ-արեւմուտք ապրող ժողովուրդներին ռուսական գերիշխանության ներքո ընդունելուց: Մերձկասպյան տարածաշրջանի ժողովուրդներին, որոնք կցանկանային անցնել ռուսական հովանավորության տակ, նախատեսվում էր «անհապաղ» ընդունել: Դրան չէր կարող խանգարել ավատատիրական կռիվներով մասնատված Իրանը, որտեղ չկար միասնական իշխանություն: Ապստամբ խաներից յուրաքանչյուրի ընդդիմության փորձը կկանխեր Կասպից ծովում գտնվող նավատորմը[7]:

---

4 Տես "Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии", т.2, вып.2, под ред.А.А.Цагарели, СПб., 1891, էջ 87-88:

5 Տես անդ, էջ 88-89:

6 Տես **П. Бутков**, *Материалы для новой истории Кавказа,с 1722 по 1803 год.*, ч.2, СПб., 1869, էջ 286-287:

7 Տես "Русско-дагестанские отношения в XVIII - начале XIX в.'', Сборник документов (отв.

Այսպիսով, Ռուսաստանը 1790-ական թթ. սկզբին ծրագրում էր Հյուսիս-արևելյան Այսրկովկասի՝ խաղաղ ճանապարհով կայսրությանը միացումը: Քաղաքական այդ ծրագրի իրագործման համար Պետերբուրգում արգելք չէին տեսնում, քանի որ ռուս-թուրքական երկու պատերազմներում ծանր պարտություն կրած Օսմանյան կայսրությունը եւ միջնադարյան ավատատիրական տերություն հիշեցնող Իրանը ռուսական առաջխաղացման դեպքում չէին կարող ռազմաքաղաքական ուժեղ հակահարված հասցնել:

Նույն ժամանակամիջոցում քննարկվում էր նաեւ Բաքվի ու Դերբենդի խանությունների՝ ռուսական հովանավորության տակ անցնելու հարցը[8]: Վերջիններիս նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշումը փոփոխության է ենթարկվում 1795 թ., երբ հայտնի է դառնում, որ Աղա Մուհամմադ խան Ղաջարը հաղթանակով է դուրս եկել Իրանում գահի համար մղվող պայքարից եւ հայացքն ուղղել է դեպի Այսրկովկաս՝ նախօրոք ստանալով օսմանյան եւ գերմանական պետությունների ղեկավարների հավանությունը[9]:

Աղա Մուհամմադ խանն իր կովկասյան քաղաքականության մեջ հետեւում էր ինչպես Ռուսական պետության, այնպես եւ Օսմանյան կայսրության քաղաքական ուղենիշին: Խանի մոտ անցկացրած 1793 թ. խորհրդակցության ժամանակ որոշվում է չխզել հին կապերը Ռուսաստանի հետ[10]: Միաժամանակ խանը նամակագրության մեջ է մտնում Կոստանդնուպոլսի իշխանությունների հետ՝ Վրաստանի հարցում Օսմանյան կայսրության աջակցությունը ստանալու համար: Օսմանյան կայսրությունում իրանական կողմին պատասխանում են, որ իրենք պատրաստ են Աղա Մուհամմադ խանին Իրանի շահ ճանաչել, եթե նա գրավի Վրաստանը[11]:

Այսպիսով, միավորված իրանական պետության գաղափարը լուրջ անհանգստություն էր առաջացրել ռուսական կառավարող շրջանակներում: Ռուսաստանը ստիպված էր ակտիվացնել իր քաղաքականությունը խանությունների նկատմամբ եւ դիմել գործնական քայլերի: Ռուսական կառավարությունը ԺԸ. դ. 90-ական թթ. երկրորդ կեսին Հյուսիսարեւելյան Այսրկովկասում հիմնական շեշտը դնում է Բաքվի խանության վրա՝ հաշվի առնելով նրա ռազմաքաղաքական ու առեւտրա-տնտեսական նշանակությունը[12]:

Իրանի նկատմամբ ռուսական կառավարության վերաբերմունքը պայմանավորված էր նաեւ ռուս-իրանական եւ ռուս-հնդկական առեւտրային հարաբերությունների զարգացմամբ ու ամրապնդմամբ: Ուստի, 1792 թ. հունվարի 12-ին Պետական խորհուրդը քննության է առնում Գիլանի Մուրթազա Ղուլի խանի օգնության խնդրանքը[13]՝ ի հակակշիռ Իրանում օրեցօր ուժեղացող Աղա Մուհամմադ խանի[14]: Ռուսաստանի

ред. В. Гаджиев), М., 1988, էջ 225:

8 Այդ մասին առավել մանրամասն տես "Русско-дагестанские отношения в XVIII - начале XIX в.", էջ 225-226:

9 Տես «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.)», աշխատ.՝ Ռ. Տիրանյանի, Երեւան, 1981, էջ 91:

10 Տես П. **Бутков**, *Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год.*, էջ 329:

11 Տես "М.И.Кутузов", Документы (под редакцией подполковника Л.Бескровного), т.1., М., 1950, էջ 247:

12 Տես Н. **Дубровин**, История войны и владычества русских на Кавказе, ч.3, СПб., 1886, էջ 14:

13 Տես ''Архив Государственного Совета'', т.1, 1869, էջ 790:

14 Նրա մասին տես "Жизнеописание Ага-Магомет-Хана Каджара, основателя ныне царствующей в Персии династии, с кратким обозрением последовавших по его смерти

«դանդաղկոտությունը» պայմանավորված էր Աղա Մուհամմադ խանի հետ հարաբերությունները չփչացնելու ցանկությամբ եւ քաղաքական հաշվարկով[15]:

ԺԸ. դ. 90-ական թթ. Ղարաբաղի, Գանձակի, Դերբենդի, Ղուբայի ու Շաքիի խանությունները եւ Վրաստանի թագավորությունը շարունակում էին մնալ որպես Այսրկովկասի ամենաազդեցիկ քաղաքական միավորներ[16]:

Աղա Մուհամմադ խանը 1791 թ., դուրս գալով Թավրիզից, բանակ է դնում Մուշկիանբար կոչվող վայրում[17]: Շահի պալատական պատմագիր Մուհամմադ Ֆաթհալլահ իբն Մուհամմադ Թաղի Սարավին գրում է. «երբ ողորմած տերը արքայական միտքն ուղղեց դեպի Ատրպատականի նվաճումը, բոլոր այն դրախտային վիլայեթները հպատակեցվեցին թագավորական շեմքի նվիրյալներին եւ անցան միապետի տիրապետության տակ: Այն երկրի պատվարժան ու զորեղ բոլոր խաները եկան համբուրելու Ալլահի սրվերի ոտքերը եւ գլուխ խոնարհելու նրա առաջ»[18]:

Աղա Մուհամմադ խանը 1793 թ. ամռանը Սուլեյման խանին նշանակում է Ատրպատականի փոխարքա եւ մեծ զորաբանակով ուղարկում Թավրիզ՝ սպանալու տեղի խաների, մասնավորապես, Իբրահիմ Խալիլ Ջեւանշիրի հնազանդությունը[19]: Սուլեյման խանը Ղարաբաղի խանին խալաթ եւ սուր է ուղարկում եւ նրանց միջեւ «ձեւական սիրալիր հարաբերություններ են հաստատվում»[20]: Այսրկովկասյան խաները բարդ իրավիճակում երկդիմի քաղաքականություն էին վարում: Այսպես, 1793-94 թթ. Դերբենդի, Թալիշի եւ Շամախիի խաները դիմել էին Գուդովիչին Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու խնդրանքով, սակայն Սուլեյման խանի՝ տարածաշրջանից հեռանալուն պես խաների քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ փոխվում է[21]: Վրաստանում գտնվող ռուսական ռեզիդենտ զինվորական Ս. Բուրնաշեւը դեռեւս 1780-ական թթ. կեսերին նշում էր, որ «ադրեբիջանական ինքնիշխան խաները», վախենալով տարածաշրջանում ռուսական ազդեցության ամրապնդումից, ինչը կզրկեր իրենց ինքնիշխանությունից, թեքվում էին դեպի Թուրքիա[22]:

главнейших происшествий", СПб., 1835: Հայկական աղբյուրները նրան կոչում էին «Աղա-Մամատ-Շահ, Ներքինի-Շահ եւ Չէզոք-Շահեն». **Մ. Բարխուդարյանց**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ., Թիֆլիս, 1907, էջ 123:

15 Տես **Պ. Չորանյան**, Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից. ՊԲՀ, 1991, թ. 2:

16 Տես **G. Hambly**, *Agha Muhammad khan and the establishment of the Qajar dynasty. The Cambridge history of Iran,* vol. 7, Cambridge, 1991, էջ 126:

17 Կաթողիկոսական Դիվան, թղթ. 6, վավ. 166. «...մարդ եւ թուղթ առաքեաց առ իշխողսն իւրաքանչիւր երկրաց, եւ ի նոցանէ մօտակայքն գնացին առ նա, եւ հեռաւորքն մարդ եւ ընծայս յղեցին, հպատակութիւն ցուցանելով». «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ա.-Բ., խմբագրեց Գիւտ քահանայ Աղանեանց, գիրք Ա., Թիֆլիս, 1893, էջ 25:

18 **Ք. Կոստիկյան**, Իրանի պալատական պատմագիր Սարավին Աղա Մուհամմադ խանի 1795 թ. դարաբաղյան արշավանքի մասին /«Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», XXVII Երեւան, 2011, էջ 339:

19 Տես **П. Бутков**, նշվ. աշխ., էջ 326:

20 **Միրզա Յուսուֆ Ներսեսով**, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը բնագրից, ներածությունը եւ ծանոթագրությունները Ք. Կոստիկյանի, Երեւան, 2000, էջ 67:

21 Օրինակ՝ Դերբենդի Շեյխ Ալի խանը հրաժարվում էր ստորագրել ռուսական հովանավորության տակ անցնելու մասին փաստաթուղթը. ''Архив Государственного Совета'', СПб., т.1, ч.2, էջ 796, 797:

22 Տես **С. Бурнашев**, Описание областей Адребижанских в Персии и их политическаго

Աղա Մուհամմադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից[23] հետո Ռուսաստանում ընդունվում է Այսրկովկաս արշավելու քաղաքական որոշում: Այս ուղղությունը ռուսական արտաքին քաղաքականության մեջ դառնում է գերակա: Ռուսական պետությանը ձեռնոց էր նետված, եւ անհրաժեշտ էր վերականգնել ոտնահարված հեղինակությունը[24]: Այս հանգամանքը միտված էր արդարացնելու ռուսական ռազմական ներխուժումն Այսրկովկաս՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Աղա Մուհամմադ խանի՝ Վրաստան նախապատրաստվող արշավանքի մասին օգնության խնդրանքներ Թիֆլիսից բազմիցս էին հնչել: Թիֆլիսի գրավումից հետո Հերակլը Սանկտ Պետերբուրգում գտնվող իր որդուն եւ իշխան Ճավճավաձեին գրում էր, որ հույսը կապելով Գեորգիեւսկի դաշնագրի համապատասխան դրույթների հետ եւ օգնություն սպասելով ռուսներից՝ ինքը պատշաճ դիմադրություն չէր կազմակերպել[25]:

Մինչդեռ Վ. Զուբովին 1796 թ. փետրվարի 10-ին տրված կարգադրության մեջ հանձնարարվում էր արշավանքի ընթացքում տեղի բնակիչների շրջանում հայերեն, վրացերեն, պարսկերեն լեզուներով բացատրական նամակներ տարածել. դրանցում պետք է նշվեր Ռուսաստանի «բարի նպատակները»[26]:

1796 թ. մարտին սենատի հրամանով Ռուսաստանը հրապարակում է Իրան արշավելու վերաբերյալ մանիֆեստը, որտեղ Աղա Մուհամմադ խանին անվանում է Իրանում «իշխանության զավթող»[27]: Արշավանք սկսելու պատճառ նշվում էր Աղա Մուհամմադ խանի ներխուժումը Վրաստան եւ Հյուսիսարեւելյան Այսրկովկաս: Փաստորեն, ռուսական կառավարող շրջանակների «քաղաքական անտարբերությունը» Վրաստանի ճակատագրի նկատմամբ 1790-ական թթ. առաջին կեսին պայմանավորված էր տարածաշրջանում գործողությունների ազատություն ստանալու ձգտումով: Մանիֆեստը կոչ էր անում տարածաշրջանի խաներին չհամագործակցել «գիշատիչ» Աղա Մումամմադ խանի հետ, հակառակ դեպքում անվանելով նրանց ռուսական գահի թշնամիներ[28]:

Շուտով Աղա Մուհամմադ խանը մեծ բանակով շարժվում է Շամախիի ուղղությամբ, քանի որ ըստ Աբրահամ Ասպապատցու վկայության. «Եւ քանզի անդր քան զԿուր գետն՝ եղեալ նախարարք, այսինքն՝ Դարբանդայ եւ Բաքուայ եւ Նուխուոյ եւ այլոց տեղեաց եւս խանքն՝ հնազանդեալ էին Աղա Մահմատ խանին եւ թոշակ տային զօրաց նո-

---

состояния, Курск, 1793, էջ 5:

23 «Գազանք կատաղիք արեան ծարաւիք զինուորք պարսկային եւ զայլք քաղցեալք ծնունդք չարութեան յարձակեցան ի վերայ աղմկեալ եւ շփոթեալ բազմամբոխ քաղաքի». «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ա., Թիֆլիս, 1893, էջ 28:

24 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երեւան, 1972, էջ 238:

25 Տե՛ս А. **Цагарели**, նշվ. աշխ., էջ 105-106:

26 Տե՛ս "Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг.", Сборник документов, под редакцией М. Нерсисяна, т. 4, Ереван, 1990, էջ 420. Н. **Дубровин**, *Поход графа В. А. Зубова в Персию в 1796 году,* էջ 229:

27 Տե՛ս ''Полное Собрание Законов Росийской Империи'' (ПСЗРИ), т.23, СПб., 1830, էջ 876. «...Զուբով մեծաւ բազմութեամբ ելանէ ի Ղզլար եւ դիմէ ի Դարբանդ», - գրում է Սարգիս Հասան-Ջալալյանցը. «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.)», էջ 160:

28 Տե՛ս ПСЗРИ, էջ 878:

բա, եւ միայն Շամախի էր ի մէջի անդ ապստամբ»[29]: Շամախիի գրավումից հետո Աղա Մուհամմադ խանը ֆիրմաններ է տարածում Հյուսիսարեւելյան Այսրկովկասի խաների շրջանում: Դիմելով տեղի տիրակալ-խաներին՝ նա նշում է, որ «ադերբեջանական խաները» իրեն շահ են ճանաչել, եւ ինքն եկել է պատժելու իր հակառակորդներին[30]: Տարածաշրջանի խաները սարսափած վիճակում սպասում էին քաղաքական ազդեցության հաստատման համար թեժացող պայքարի հանգուցալուծմանը[31]:

Շուտով ռուսական զորաջոկատը շարժվում է Դերբենդի ուղղությամբ եւ պաշարում քաղաքը: Աղա Մուհամմադ խանը Մուղանի դաշտից հեռանալիս իր հետ պատանդ էր տարել Երեւանի, Նախիջեւանի եւ Խոյի խաների կանանց ու երեխաներին՝ որպես խաների հնազանդության լավագույն միջոց: Միեւնույն ժամանակ խանը մերժում է Դերբենդի խանի օգնության խնդրանքը: Մարտի 20-ին Գուդովիչը Շեյխ Ալի խանից պահանջում է հանձնվել՝ սպառնալով, որ Դաղստանում տեղակայված մեծաքանակ զորքերը պատրաստ են «անցնելու բոլոր նրանց գլուխների վրայով», որոնք համարձակվել էին ընդդիմանալ գերագույն իշխանության կամքին[32]:

Աղա Մուհամմադ խանի՝ տարածաշրջանից հեռանալուց հետո փոխվում են նաեւ Դաղստանի եւ Այսրկովկասի տիրակալների տրամադրությունները: Ռուսական հովանավորությունը ճանաչած Բաքվի խանը, տեսնելով, որ պարսկական վտանգն անցել է, երկու հրանոթ է ուղարկում Դերբենդ: Դերբենդի խանին իրենց օգնությունն են առաջարկում Ղազիկումուխի, Ջենգութայի եւ Ակուշայի առաջնորդները: Պարզ էր, որ ամենից ուրախ էր Ղարաբաղի Իբրահիմ խանը, քանի որ Աղա Մուհամմադ խանի հեռանալուց հետո նրա խանությունը ժամանակավորապես փրկված էր: Դերբենդի Շեյխ Ալի խանը, չբավարարվելով հարեւան լեռնական առաջնորդների տրամադրած ռազմական աջակցությունից, օգնության խնդրանքով դիմում է թուրքական կառավարությանը՝ անհավատ ռուսների դեմ պայքարելու[33]: Սակայն սուլթանն այս խնդրանքն անպատասխան է թողնում, եւ Դերբենդի խանը ստիպված է լինում բավարարվել հարեւան տիրակալների առաջարկած օգնությամբ:

Դաղստանյան տիրակալները, որոնք իրենց զորակցությունն էին հայտնել Վ. Զուբովին, Շեյխ Ալի խանին գաղտնի ռազմական օգնություն էին նախապատրաստում, սակայն քաղաքի պաշարումն անհնարին էր դարձնում այդ մտադրության իրագործումը[34]: Փաստորեն, տեղի ժողովուրդների եւ նրանց առաջնորդների քաղաքական կողմնորոշումը դեպի Ռուսաստան այնքան էլ կայուն չէր: Նրանց «ռուսամետ» դիրքորոշումը պայմանավորված էր պատմական ու քաղաքական պահի թելադրանքով[35]: Մի կողմից՝

29 «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.)», էջ 68:

30 Н. **Дубровин**, *Поход графа В. А. Зубова в Персию в 1796 году,* էջ 217:

31 Տես **M. Atkin**, *Russia and Iran 1780-1828,* էջ 20-21:

32 Տես Н.Дубровин, *История войны и владычества русских на Кавказе,* ч.3, СПб., 1886, էջ 99:

33 Տես անդ, էջ 103-104:

34 Տես անդ, էջ 112:

35 Դերբենդի պաշարման ժամանակ գեներալ Բուլգակովին են դիմում մի խումբ հայեր՝ ռուսական հպատակություն ստանալու խնդրանքով եւ նրան են տալիս նամակների մի: Շեյխ Ալի խանը Սամուր գետով

Աղա Մուհամմադ խանի ավերիչ արշավանքը, մյուս կողմից՝ Ռուսաստանը, օգտվելով Այսրկովկասում ստեղծված քաղաքական իրավիճակից, տարածաշրջան ռազմական ներխուժում էր կատարել: Աշխարհաքաղաքական պատկերն ամբողջացնում էին Օսմանյան կայսրության նկրտումները կովկասյան քաղաքականության աշխուժացման ազդեցությամբ: Այս իրավիճակում տեղի խաներն ու Դաղստանի լեռնական առաջնորդները քաղաքական կողմնորոշման խնդիր ունեին: Կողմերից եւ ոչ մեկի վերջնական հաղթանակը Կովկասում իրատեսական չէր, առավել եւս կարճ ու տեւական արշավանքների միջոցով, մնում էր որդեգրել կովկասյան երեք խաղացողների միջեւ խուսանավելու քաղաքականությունը:

Դերբենդի հայ բնակչության գործուն մասնակցության շնորհիվ[36] մայիսի 10-ին 1796 թ. ռուսները քաղաքը գրավում են[37]: Այդ լուրն արագորեն տարածվել էր Դաղստանի ժողովուրդների շրջանում, եւ Վ. Զուբովի կայանատեղին լցվել էր լեռնական ժողովուրդների առաջնորդներով, որոնք շտապում էին իրենց հնազանդությունը հայտնել հաղթողին: Տեղի էր ունենում աշխարհաքաղաքական կողմնորոշման ճշգրտում կովկասյան տարածաշրջանի հենց ներսում: Այսպես, դաղստանցի տիրակալները, դիմելով Վ. Զուբովին, արձանագրում էին, որ թեպետ իրենք բարեկամության մեջ են եղել Դերբենդի տիրակալների հետ, սակայն քաղաքը այժմ գրավել են ռուսները, եւ իրենք էլ հնազանդություն են հայտնում ռուսական գահին[38]: Հունիսի 16-ին Բաքվի խանը, ներկայանալով Վ. Զուբովին, ռուսական հովանավորություն է խնդրում: Որպես ապացույց նշում էր, որ Աղա Մուհամմադ շահի արշավանքի ժամանակ ինքը հպատակություն է հայտնել՝ շեղելով նրա ուշադրությունը Դերբենդի խանին օգնության գնալու մտադրությունից: Ռուսների կողմից քաղաքի գրավման լուրն ինքն ընդունում է հրանոթների զարկով՝ ի նշան ուրախության: Շամախիի խանը Վ. Զուբովի մոտ է ուղարկում իր հավատարիմ բեկերից մեկին՝ ռուսական հպատակություն խնդրելով: Բանագնացը նշում էր, որ շահի արշավանքի ժամանակ խանը բնակիչների հետ միասին թաքնվել էր լեռներում եւ խոչընդոտել էր պարսիկների առաջխաղացումը դեպի Դերբենդ: Ավելին, ըստ բեկի, Մուստաֆա խանին հաջողվել էր ոչնչացնել թշնամու շուրջ 3000 զինվոր, տալով 1000 զոհ, ինչի համար շա-

---

Ղազիկումուխի խանին, լեզգիներին եւ դաղստանյան այլ տիրակալներից օգնություն էր խնդրում՝ փոխարենը առաջարկելով ստրուկներ եւ պարգեւատրում. "Историческое известие о походе российских войск в 1796 году в Дагестан и Персию под командою графа Валериана Александровича Зубова". "Отечественные записки", ч.31, СПб., 1827, էջ 147:

36 Այդ մասին տե՛ս "Артемий Араратский", т.2, СПб., 1813, էջ 115:

37 Պարսկաստանում եւ Թուրքիայում իբրեւ «ճշմարիտ մարգարեություն» տարածված էր այն թյուր կարծիքը, թե երբ քրիստոնյաները գրավեն Դերբենդը, մահմեդական իշխանության ու հավատի կործանումն անխուսափելի կլինի. С. **Бурнашев**, Описание областей Адребижанских в Персии и их политическаго состояния, Курск, 1793, էջ 7: Այդ «կարծիքը» պայմանավորված էր Դերբենդի՝ Իրանի «դարպասներ» լինելու քաղաքական ու պատմական հանգամանքով: Դերբենդում 6000 մահմեդական եւ 3000 հայ են լինում, որոնք «ստիպողաբար» պաշտպանում էին ամրոցը. "Историческое известие о походе российских войск в 1796 году в Дагестан и Персию под командою графа Валериана Александровича Зубова". "Отечественные записки", ч.31, СПб., 1827, էջ 154:

38 Տե՛ս **Н. Дубровин**, նշվ. աշխ., էջ 121-122:

հը Թիֆլիսից վերադառնալիս ավերում է Շամախին[39]: Շուտով ռուսներին հաջողվում է գրավել նաև Ղուբայի եւ Բաքվի խանությունները:

Վ. Զուբովի՝ գեներալ Սավելեւին ուղղված 1796 թ. սեպտեմբերի 20-ի գրության մեջ ներկայացվում է Հյուսիսարեւելյան Այսրկովկասի ապագա ճակատագրի վերաբերյալ ռուսական դիվանագիտության ծրագրերը: Հաշվի առնելով Դերբենդի եւ Ղուբայի խանությունների աշխարհաքաղաքական կարեւորությունը ռուսական կայսրության համար՝ Վ. Զուբովը ծրագրում էր նրանց Ռուսաստանի մշտական վերահսկողության տակ պահել դիւսպիական զործոնի կիրառությամբ: Այսպես, հարցի լուծումը նա տեսնում էր Դերբենդում եւ Ղուբայում Ֆաթհ Ալի խանի օրինական ժառանգներին իշխանության բերելով: Նախատեսվում էր Ֆաթհ Ալի խանի դուստր Փերիջա խանումին իշխանության բերել Դերբենդում, իսկ որդուն՝ Հասան բեկին՝ Ղուբայում: Վ. Զուբովը նպատակահարմար էր գտնում ամուսնական կապով միավորել Դերբենդի խանությունը եւ Թարքիի շամհալությունը՝ ամուսնացնելով Փերիջա խանումին շամհալի որդու՝ Բոյնակի տիրակալի հետ (այդ ժամանակ շամհալը հրաժարվել էր իշխանությունից հօգուտ որդու)[40]:

Այսպիսով, նախատեսվում էր Շիրվանի եւ Հարավային Դաղստանի տարածքները միավորել մեկ միասնական քաղաքական կամքի ներքո: Փաստորեն, 1750-1770-ական թթ. ընթացքում Ֆաթհ Ալի խանի ստեղծած լայնարձակ իշխանությունը վերածնվում էր, սակայն՝ ռուսական գերիշխանությամբ: Բացի դրանից, Թարքիի շահմալությունը դարերի ընթացքում ապացուցել էր իր հավատարմությունը ռուսական գահին, եւ Դաղստանում նրա հզորացումով ռուսական իշխանությունները հույս ունեին վերահսկել Ղազիկումուխի խանությունը եւ մյուսներին:

Պլատոն Զուբովին ուղղված 1796 թ. հոկտեմբերի 15-ի նամակում ռուսական զորքերի հրամանատարը նշում էր, որ Դաղստանի եւ Շիրվանի միավորումը հնարավորություն կտար Ռուսաստանին վերահսկելու Թերեք գետից մինչեւ Կուրն ընկած տարածքների ռազմաքաղաքական ու առեւտրա-տնտեսական իրավիճակը: Բաքուն ռուսական իշխանություն դարձնելու դեպքում Շամախիի խանությունը, ունենալով անհարմար աշխարհագրական դիրք, «բաց» սահմաններով հարկադրված կլիներ ճանաչելու ռուսական գերիշխանությունը: Վ. Զուբովի քաղաքական հաշվարկներով հենց այդ ճանապարհով հնարավոր կլիներ վերահսկել եւ ի վերջո հպատակության բերել Դաղստանի լեռնական ժողովուրդներին՝ որպես Կովկասյան գծի անվտանգության լավագույն երաշխիք[41]:

Փաստորեն, Վ. Զուբովի առաջարկած քաղաքական ծրագրով Հարավային Դաղստանի եւ Շիրվանի ընդարձակ տարածքների վրա Ռուսաստանին հպատակ մահմեդական պետություն էր ստեղծվում: Խանությունների նկատմամբ իրականացվող կադրային քաղաքականությունը իրավամբ բացատրում էր Հյուսիսարեւելյան Այսրկովկասում Ռուսաստանի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդման եղանակները: Ռուսական ռազ-

39 Տե՛ս "Историческое известие о походе российских войск в 1796 году в Дагестан и Персию под командою графа Валериана Александровича Зубова". "Отечественные записки", ч. 31, СПб., 1827, էջ 163-164:

40 Տե՛ս **Н. Дубровин**, նշվ. աշխ., էջ 156-157:

41 Տե՛ս **Н. Дубровин**, նշվ. աշխ., էջ 158-159:

մավարությունը տարածաշրջանի խանությունների նկատմամբ ուներ հետաքրքրական մի առանձնահատկություն: Դերբենդից մինչև Բաքու ընկած տարածքների վրա, ռուսական պետական այրերը որպես հավատարիմ կառավարիչների տեսնում էին Ֆաթհ Ալի խանի ընտանիքի անդամներին: ԺԸ. դ. երկրորդ կեսի Ռուսաստանի ռազմավարությունը Պետրոս Մեծի արևելյան քաղաքականության ուղենիշն էր ուրվագծում՝ Դերբենդից դեպի Իրանի խորքը ձգվող տարածքների վրա ռուսական վերահսկողության հաստատում՝ որպես դեպի Հնդկաստան տանող միակ հուսալի ճանապարհի: Հետևաբար, ռուսական պետության հարաբերությունները Հյուսիսարևելյան Այսրկովկասի խանությունների հետ 1790-ական թթ. պետք է դիտարկել Ռուսաստանի ռազմաքաղաքական և առևտրատնտեսական շահերի շարակարգում, իսկ այդ խանությունները դեպի Ասիա տանող հուսալի ճանապարհ էին, որի «պատուհանը բացվել էր» Պետրոս Մեծի Կասպիական արշավանքի ընթացքում: Այսպես, ռուսական պետական ծրագրերում Հյուսիսարևելյան Այսրկովկասին տնտեսական, մասնավորապես առևտրային մեծ դերակատարում էր հատկացվում: Ռուս-իրանական առևտրային հարաբերությունների զարգացման որպես «միակ հարմար և շահավետ տեղ» դիտարկվում էր Բաքու քաղաք-նավահանգիստը[42]: Բաքվի ռազմավարական նշանակության մասին էր վկայում այն հանգամանքը, որ նրանում ամրությունների շինարարության իրականացման համար 1797 թ. նախատեսվում էր հատկացնել 283 859 ռուբլի, իսկ նույն նպատակի համար Թարքիին՝ 90634 ռուբլի[43]:

Բացի այդ, նախատեսվում էր Կուր և Արաքս գետերի միախառնման վայրից քիչ հեռու, Ջավադի մոտակայքում՝ Կուրի ձախ ափին, քաղաք-ամրություն կառուցել և այն կոչել Եկատերինասերդ[44]: Քաղաքը ծառայելու էր Ռուսաստանի ռազմաքաղաքական, առևտրային ու տնտեսական շահերը դեպի հարավ տարածելու համար ռազմավարական հենակետ: Նոյեմբերի 6-ին մահանում է Եկատերինա Բ., և գահ բարձրացած Պավել Ա. էական փոփոխություններ է մտցնում կայսրության կովկասյան քաղաքական ուղեգծում՝ դադարեցնելով Վ. Զուբովի արշավանքը:

Այդ իրադարձությունը ծանր հետևանքներ ունեցավ նաև Այսրկովկասի բնակիչների, մասնավորապես հայերի համար, որոնք մեծ հույսեր էին կապում Ռուսաստանի հետ: «Զուբովի՝ այսպէս ասուպ ասպդի նման երևելով և անյայտանալովն ընկնում է Ռուսաց համարումն: Աւելի և աւելի կատաղում են թշնամի մահմետականներն և իբրև միս խորովուում է Աղուանից երկրի հայն, որ այնքան սերտ յարած է լինում Ռուսաց», - գրում է ժամանակակիցը[45]:

Վերլուծելով 1790-ական թթ. առաջին կեսի քաղաքական զարգացումները տարածաշրջանում, նկատենք, որ ռուսական կառավարությունը հստակ գիտակցում էր Աղա Մուհամմադ խանի՝ Սեֆյանների օրոք գոյություն ունեցող Իրանի պետական սահմանների վերականգնման քաղաքական նպատակները: Ռուսաստանը հաղթանակ տանե-

42 Տե՛ս **В. Зубов**, *Общее обозрение торговли с Азиею. "Русский архив", 1873,* кн.1, էջ 886:
43 Տե՛ս **Н. Дубровин**, նշվ. աշխ., էջ 194:
44 Տե՛ս **В. Зубов**, նշվ. աշխ., էջ 889–890:
45 **Մ. Բարխուդարյանց**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ., Թիֆլիս, 1907, էջ 125:

լով ռուս-թուրքական երկու պատերազմներում եւ հաստատվելով Մերձսեւծովյան տարածքներում, լուծելով Ղրիմի միավորման հարցը (1783 թ.)[46], հայացքն ուղղել էր դեպի Հյուսիսարեւելյան Այսրկովկաս եւ Իրան[47]:

1747-ից մինչեւ 1791 թ. Ռուսաստանը չէր կարողանում դիմակայել Օսմանյան կայսրության քաղաքական նկրտումներին մերձկասպյան շրջաններում: Ռուսական կառավարող շրջանակները 1720-1730-ական թթ. օրինակով Իրանի պետությունը միավորող «նոր Նադիր շահ էին փնտրում»՝ պաշտպանելով երկրի կենտրոնամետ ուժերին: Ցասիի հաշտության պայմանագրի կնքումից հետո Ռուսաստանը հանդես է գալիս Իրանի քաղաքական մասնատվածության օգտին եւ Աղա Մուհամմադ Ղաջարին իշխանության գավթիչ է կոչում: Ռուսաստանի հարավային սահմաններից վտանգի հեռացումը Եկատերինա Բ. տեսնում էր Կասպից ծովի ափամերձ տարածքներում յուրատեսակ անվտանգության գոտու ստեղծմամբ՝ ի դեմս մահմեդական պետության: Ռուսաստանի եւ Հյուսիսարեւելյան Այսրկովկասի խանությունների 1790-ական թթ. կեսի քաղաքական զարգացումները տարածաշրջանի համար պատմական նշանակություն ունեցան: Նադիր շահի պետության տրոհումից հետո Կուրից հյուսիս գտնվող կիսանկախ խանությունները՝ ի դեմս Աղա Մուհամմադ խանի արշավանքի բախվեցին ինքնուրույնությունը կորցնելու իրական վտանգի: Խանությունների համար հասունացել էր Ռուսաստանի, Օսմանյան կայսրության կամ Իրանի միջեւ քաղաքականապես կողմնորոշվելու պահը: Հյուսիսարեւելյան Այսրկովկասի խանությունների համար ողբերգականն այն էր, որ ստեղծված ռազմաքաղաքական իրադրության մեջ սեփական անկախության պահպանումը դատապարտված էր:

Աղա Մուհամմադ շահ Ղաջարի 1795 թ. արշավանքի հետեւանքով Հյուսիսարեւելյան Այսրկովկասի խանությունները կորցրին իրենց փաստացի անկախ կարգավիճակը՝ կրկին մաս կազմելով Իրանի պետության: Փաստորեն, Իրանի տիրակալի ռազմական ներխուժումն Այսրկովկաս զրկում է ռուսական իշխանություններին 1770-1790-ական թթ. աշխարհաքաղաքական ու տնտեսական ձեռքբերումներից՝ «մեծ հարված» հասցնելով «ռուսաց արեւելից շահերին» եւ «բոլորովին վայր ձգեց նրանց վարկը»[48]: Ռուսաստանը ստիպված էր վերանայել իր կովկասյան քաղաքականության հայեցակարգը եւ կազմակերպել պատասխան արշավանքը՝ նախկին վիճակը վերականգնելու նպատակով:

46 Ղրիմի միավորումից անմիջապես հետո, 1783 թ., Ռուսաստանը Բարձր Դռան հետ կնքում է շահավետ առեւտրային պայմանագիր. տե՛ս "Трактат о торговле между Российскою империею и Портою оттоманскою, заключенный в Константинополе июня 10-го дня 1783 года":

47 Տե՛ս **Պ. Չորանյան**, Հայ-ռուս-պարսկական կապերի պատմությունից (XVIII դարի վերջ). ՊԲՀ, թ. 2., Երեւան, 1991, էջ 55-65:

48 **Բաֆֆի**, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 10, Երեւան, 1959, էջ 270: